

ԿՈՐՅՈՒՆ ԱՐԵՎԱՏՅԱՆ

Հայկական երկրորդ հեռուստաալիքի իրավաբանական վարչության պետ,

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի հետրուհական կրթության առողջապահության կառավարման և տնտեսագիտության ամբիոնի առողջապահական իրավունքի դասախոս



ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԱՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՐԱԾԽԻՔՆԵՐԸ <ԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն գիտական հոդվածում ուսումնասիրվել են մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացման իրավական, քաղաքական, սոցիալական երաշխիքները, դրանց առկայությունը, լիարժեքությունն ու գործնականությունը կիրառելի լինելը:

Տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվել են արծարձովոր խնդրին առնչվող ինչպես ներպետական, այնպես էլ արտասահմանյան երկրների փորձն ու նոտեցումները, որի արդյունքում հոդվածում կատարվել են մի շարք առաջարկություններ:

Հիմնարար բառեր - բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք, իրավական, քաղաքական, սոցիալական երաշխիքներ, բժշկական սպասութագրություն, առողջապահության համակարգի հաշտարար:

Գիտական գրականության մեջ երաշխիք ասելով՝ հասկանում են «այն օրենկանիվ պայմանները և միջոցները, որոնք ապահովում են ոչ միայն ժողովրդավարական սկզբունքների, գաղափարների, մարդու իրավունքների և ազատությունների սահմանումն ու իրավական ամրագրումը, այլ նաև նրանց բազմակողմանի պաշտպանությունը և իրագործումը»¹:

Երաշխիքը սոցիալ-տնտեսական, քաղաքական, քարոյական, իրավաբանական, կազմակերպչական նախադրյալների, պայմանների, միջոցների և մերոդների համակարգ է, որն անձանց համար ստեղծում է հավասար հնարավորություններ իրենց իրավունքների, ազատությունների և շահերի իրացման համար: Երաշխիքի հիմնական գործառույթը պետության կողմից պարտականությունների կատարումն է անհատի իրավունքների իրացման ոլորտում²: Երաշխիքները մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության անքաժանելի բաղկացուցիչ մասն են կազմում:

Իրավունքների պաշտպանություն ասելով՝ հասկանում ենք այն «միջոցները, որոնք իրականացվում են պետական մարմնների և հասարակական կազմակերպությունների կողմից՝ ուղղված իրավունքների խախտման նախագործության ամրաժանականության պահպանության և պաշտպանության անքաժանելի բաղկացուցիչ մասն են կազմում:

Իրանք ծնող պատճառների վերացմանը և անհատի կողմից իր իրավունքների և ազատությունների իրագործման բնականոն ընթացքին նպաստելուն»: Իրավունքների պաշտպանությունն իրենից ներկայացնում է «իրավունքների իրագործման պարտադիր միջոց, որը կիրառվում է օրենքով սահմանված կարգով իրավասու մարմինների կողմից՝ խախտված իրավունքների վերականգնման նպատակով»³:

Իրավական կարգավորումը պետության ազգեցությունն է հասարակական հարաբերությունների վրա իրավական նորմերի ընդունման և կիրաման միջոցով: Իրավական կարգավորումը հիմնվում է իր առարկայի և մերոդի վրա, որտեղ իրավական կարգավորման առարկան հասարակական հարաբերությունների այն ձևն է, որն ամրագրվում է իրավական նորմերի համապատասխան խմբում: Իսկ իրավական կարգավորման մերոդի մերքը հասկանում ենք իրավական նորմերի ազդեցության ձևը և եղանակը հասարակական հարաբերությունների վրա⁴:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու՝ մարդու սահմանադրական իրավունքի իրացման և պաշտպանության ոլորտում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում Հայաստանի Հան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բապետության (ՀՀ) պետական իշխանության օրենսդիր մարմինը, որը կոչված է վարքագծի համապարտադիր նորմեր սահմանելու միջոցով կարգավորելու մարդու իրավունքների և ազատությունների ճանաչման, հարգման և ապահովման, նաև պաշտպանության հետ կապված հարաբերությունները: Դրան է ողղոված ընթացիկ օրենսդրությունը, որի նպատակն է կոնկրետացնել մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, զարգացնում է դրանք՝ հարստացնելով վերջիններին իրավական կարգավիճակի բովանդակությունը, ստեղծում է դրանց գործնական իրացման, ապահովման, նաև խախտման դեպքում վերականգնման իրավաբանական կառուցակարգեր և այլն: Առողջապահության, ինչպես նաև բժշկական օգնության և սպասարկման ոլորտներում ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել են մի շարք օրենքներ, որոնք եկանում են մարդու իրավունքներից և պաշտպանում են վերջինիս սոցիալ-տնտեսական պահանջմունքները:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի կարգավորման բազային օրենքը «Քնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքն է, որն ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թվականի մարտի 4-ին: Բացի այդ, ընդունվել են համակարգային առումով փոխսկապակցված այլ օրենքներ՝ «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխսպատվաստելու մասին», «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»⁶, «Հոգեբուժական օգնության մասին»⁷, «Մարդու արյան և դրա բաղադրամասերի դոնորության և փոխներարկումային բժշկական օգնության մասին»⁸ ՀՀ օրենքները և այլ օրենքներ ու ենթարկան ակտեր:

«Քնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996թ. ՀՀ օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման (հողված 2-րդ, 3-րդ, 20-24-րդ) իրավական (հողված 4-19-րդ), տնտեսական և ֆինանսական (հողված 25-րդ) հիմունքները, սակայն դրանց իրացման ամբողջական երաշխիքներ դեռ սահմանված չեն: Նույն սկզբունքայնությունն է առկա նշված օրենքի հետ փոխսկապակցված, բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող այլ օրենքներում: Օրինակ, անդրադառնալով «Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխ-

պատվաստելու մասին» 16.04.2002թ.-ի ՀՀ օրենքի՝ «Դիակային դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու համաձայնության նախապայմանը» վերտառությամբ 7-րդ հոդվածի և վերջինիս հետ համակարգային առումով փոխսկապակցված այլ նորմերի իրավակարգավորման շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի իրացման ապահովման, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման ծրագրեր և արդյունավետ ու մատչելի բժշկական սպասարկման պայմաններ ապահովելու՝ պետության պարտականության՝ որպես սահմանադրաբարվական նպատակի իրացվելիության խնդիրն և գնահատելով այդ նորմերի կիրառման պրակտիկան՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 14.09.2010թ-ի թիվ ՍԴ-Օ-913 որոշմամբ արձանագրել է, որ Հայաստանի Հանրապետությունում առկա են հետևյալ հիմնախնդիրները.

ա) յի ձևավորվել այդ հարաբերությունների իրավակարգավորման այնպիսի ամբողջական համակարգ (օրենքի և ենթաօրենսդրական ակտերի միջոցով), որը կերաշխավորի առաջադրված նպատակի անթերի իրացումը և մարդու արժանապատվության, հիմնական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, կրացանի կոռուպցիոն ռիսկը,

բ) օրենքն ուժի մեջ է մտել առանց դրա գործողության անհրաժեշտ ու բավարար իրավական երաշխիքների ապահովման,

գ) առողջապահական պետական նպատակային ծրագրերում մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ պատվաստելը չներառելու պարագայում շարունակում է առկա մնալ կոռուպցիոն մեծ ռիսկի գործոնը,

դ) դիակային դոնորներից փոխսպատվաստման ենթակա օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հստակ կանոնների բացակայությունը, այդ գործողությունների թափանցիկ ու վերահսկելի կազմակերպման կառուցակարգերի բացակայությունը հասարակական անվտանգության ու արդարացված մտահոգությունների պատճառ են դառնում:⁹

Ուստի, մեր կարծիքով, ժամանակն է, որ «Քնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում տեղ գտնեն դրույթներ, որոնցով որպես իրավական և քաղաքական երաշխիքներ կահմանվեն բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պետական քաղաքականության նվազագույն նպատակներն ու սկզբունքները, որոնցով էլ առաջնորդվի պետությունը քն-

նարկվող ոլորտում ընթացիկ միջոցառումներ իրականացնելիս: Առաջարկում ենք «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում ավելացնել 1.1 հոդվածը՝ հետևյալ բովանդակությամբ.

«1. Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները պետք է միտված լինեն՝

1) պաշտպանելու մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքը՝ անկախ ազգությունից, քաղաքացիությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, տարիքից, առողջական վիճակից, քաղաքական կամ այլ հայցքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ վիճակից,

2) բարձրացնելու բժշկական օգնության և սպասարկման անվտանգության ապահովումը, արդյունավետությունը և որակը,

3) բարձրացնելու բժշկական օգնության և սպասարկման մատչելիությունը և հասանելիությունը,

4) աջակցություն ցուցաբերելու առողջապահության բնագավառի կազմակերպություններին՝ հիվանդությունները կանխարգելելու, վաղ հայտնաբերելու, ախտորոշելու ու բուժելու առաջադեմ և արդյունավետ մեթոդներ մշակելու և կիրառելու նպատակով,

5) սահմանելու բժշկական օգնության և սպասարկման որակի ապահովման պետական չափորոշիչները:

2. Բժշկական օգնության և սպասարկման ոլորտում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները պետք է միտված լինեն՝

1) ապահովելու հիվանդությունների կանխարգելման, մոր և մանկան առողջության, բնակչության հիգիենիկ և հակահամաճարակային անվտանգության ապահովման, բնակչության սոցիալապես անապահով խճերի առողջական խնդիրների գերակայությունը,

2) ապահովելու սոցիալական արդարությունը բժշկական օգնության և սպասարկման բնագավառում,

3) ապահովելու և աջակցելու հանրապետության բոլոր համայնքներում բժշկական հաստատությունների համաշափ զարգացման, բժշկական անձնակազմի համալրման և նրանց շարունակական մասնագիտական զարգացման գերակայությունը»:

«Բնակչության բժշկական օգնության և սպա-

սարկման մասին» ՀՀ օրենքի հետ փոխկապակցված «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխառության մասին» 16.04.2002թ.-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված են կենդանի դոնորների¹⁰ ընտրության շրջանակների սահմանափակումները: Մասնավորապես՝ փոխառությամբ նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը քաղաքացուց (կենդանի դոնորից) չի թույլատրվում, եթե՝

ա) չի լրացել քաղաքացու 18 տարին (քացառությամբ ուկրածուծի փոխառությամբ դեպքի),

բ) քաղաքացին սահմանված կարգով ճանաչված է հաշմանդամ,

գ) քաղաքացին հղի է,

դ) քաղաքացին պատիժ է կրում ազատազրկման վայրում, քացառությամբ, եթե ոեցիալինտն ազատազրկված անձի մերձավոր ազգականն է (ծնող, զավակ, ամուսին, քոյր, եղբայր),

ե) պատանի է,

զ) լրացել է քաղաքացու 65 տարին:

«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխառության մասին» ՀՀ օրենքը, սահմանելով փոխառությամբ իրավական հիմքերը, դոնորի, ոեցիալինտի¹¹ և բժշկական հաստատությունների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, կոչված է նաև երաշխավորելու ՀՀ Սահմանադրության 3-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 38-րդ հոդվածներով նախատեսված իրավակարգավորման սկզբունքների և մարդու իրավունքների ու ազատությունների անմիջական գործադրման անխախտելիությունը, որոնց սահմանադրաբարվական բովանդակությունից ուղղակիորեն հետևում է, որ նշված օրենքի և վերջինիս քննարկվող հոդվածի իրավակարգավորման հիմքում պետք է դրվեն.

- մի կողմից՝ մարդու արժանապատվության հարգման և պաշտպանության, մյուս կողմից՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նրա սահմանադրական իրավունքների ներդաշնակումը,

- անձի անձնուննիւնիության, ազատության և որպես վերջինիս դրսուրում՝ ազատ կամաարտահայտության երաշխավորված պաշտպանությունը,

- անհատի, նրա արժանապատվության, հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների, գերակայությունը հասարակական շահի նկատմամբ:

Փոխառությամբ անձի կյանքի, բժշկա-

ՄՐԴԱՐԱԴԱՏՎԱՌՈՒԹՅՈՒՆ

կան օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքների երաշխավորման բացառիկ միջոց է, ուստի սույն աշխատության շրջանակներում անհրաժեշտություն առաջացավ անդրադառնալ նաև կենդանի դրույթների ընտրության շրջանակներին, քանի որ, մեր կարծիքով, վերը թվարկված ցանկը ենթակա է վերանայման՝ հաշվի առնելով.

ա) փոխադրված բնագավառում կոռուպցիոն հնարավոր դրսուրումների բացառումը,

բ) արդյունավետ, մատչելի, պետության սահմանադրափակական պարտավիրությունների շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման, այդ թվում մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխադրված պայմանների ստեղծումը,

գ) որոշակի սոցիալական խմբի անձանց համար առավել կայուն իրավական երաշխիքների ստեղծումը՝ նրանց խոցելիության և անպաշտպանության նկատառումներից ելնելով:

Այդ իսկ պատճառով գտնում ենք, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 16.04.2002թ.-ի ՀՀ օրենքի 11-րդ հոդվածում պեսք է ընդլայնել կենդանի դրույթների ընտրության շրջանակների սահմանափակումների ցանկը հետևյալ բովանդակությամբ. փոխադրված պայմաններու օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելը քաղաքացուց (կենդանի դրույթից) չի բույլատրվում, եթե՝ ...

է) քաղաքացին սահմանված կարգով ճանաչվել է անգործունակ,

ը) քաղաքացին տառապում է հոգեկան խանգարումներով (իիվանդությամբ),

թ) մինչև 18 տարեկան երեխաները և վերջիններիս թվին պատկանող 18-ից 23 տարեկան անձինք, որոնք մնացել են առանց ծնողական խնամքի:

Ընդգծենք, որ փոխադրված պայմաններու կենդանի դրույթից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու վերաբերյալ նման երաշխիքներ առկա են նաև օտարերկրյա պետությունների օրենսդրություններում, ինչի մասին վկայում է կատարված ուսումնասիրությունը: Այսպես,

- սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի կողմից կենդանի դրույթ լինելու սահմանափակումը նախատեսված է «Մարդուն օրգաններ և հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 25.06.1999թ. Մոլորդայի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետով, «Մարդուն օրգաններ

և հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 04.03.1997թ. Բելառուսի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 22.12.1992թ. Ռուսաստանի Դաշնության օրենքի 3-րդ հոդվածով, «Մարդուն օրգաններ և այլ անտոմիական հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 1999թ. Ռուսաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,

- հոգեկան խանգարումներով (հիվանդությամբ) տառապող անձի կողմից կենդանի դրույթ լինելու սահմանափակումը նախատեսված է «Մարդուն օրգաններ և հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 04.03.1997թ. Բելառուսի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, «Մարդուն օրգաններ և այլ անտոմիական հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 1999թ. Ռուսաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով,

- առանց ծնողական խնամքի մնացած անձանց կողմից կենդանի դրույթ լինելու սահմանափակումը նախատեսված է «Մարդուն օրգաններ և հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 04.03.1997թ. Բելառուսի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածով, «Մարդուն օրգաններ և այլ անտոմիական հյուսվածքներ փոխադրված պայմաններում մասին» 1999թ. Ռուսաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածով:

Բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի կարևորագույն երաշխիքներից է նաև բժշկական ապահովագրությունը՝ լինի կամավոր թե պարտադիր, որի վերաբերյալ որևէ դրույթ չի պարունակում գործող օրենսդրությունը: Զուտ ապահովագրության մասին դրույթ է պարունակում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածը, համաձայն որի՝ ՀՀ-ում բժշկական օգնության և սպասարկման իրականացման ֆինանսավորման աղբյուրներն են՝

ա) հատկացումները ՀՀ պետական բյուջեից.
բ) ապահովագրական հատուցումները.
գ) մարդկանց անմիջական վճարումները.
դ) ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներ:

ՀՀ կառավարությունը պետական բյուջեով նախատեսված հատկացումներով իրականացնում է առողջապահական պետական նպատակային ծրագրերի շրջանակներում բժշկական օգնության և սպասարկման երաշխավորված ֆինանսավորում, բժշկական օգնություն և սպասարկում իրա-

կանացնողներին՝ անկախ դրանց կազմակերպահրավական տեսակից և սեփականության ձևից:

Բժշկական օգնության և սպասարկման ֆինանսավորումն ապահովագրական հատուցումներով իրականացվում է կնքված ապահովագրական պայմանագրերի համաձայն:

Հարկ ենք համարում ընդգծել, որ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածում սահմանված նորմի գործողության համար դեռևս անհրաժեշտ և բավարար ենթաօրենսդրական երաշխիքներ չեն ստեղծվել գործադիր իշխանության՝ ՀՀ կառավարության կողմից, մինչդեռ բժշկական ապահովագրությունը բխում է մարդկանց առողջության պահպանման անհրաժեշտությունից և լայնորեն տարածված է քաղաքակիրք երկրներում: Ապահովագրության այս տեսակը կապված է ապահովագրական պատահարի հետևանքով առաջացած բժշկական օգնության և սպասարկման ծախսերի ծածկման հետ: Բժշկական ապահովագրությունը ապահովությունի համար բժշկական սպասարկման ծախսերի փոխհատուցման կարևորագույն երաշխիք է:

Կամավոր բժշկական ապահովագրությունը իրականացվում է համապատասխան ապահովագրության ծրագրերով և ապահովագրվողներին ապահովում է լրացուցիչ բժշկական և այլ ծառայություններով, որոնք դուրս են մնացել պարտադիր բժշկական ապահովագրության ծրագրերում սահմանված ծառայություններից: Կամավոր բժշկական ապահովագրությունն իրականացվում է ինչպես կյանքի երկարաժամկետ ապահովագրության, այնպես էլ ոչ կյանքի՝ ընդհանուր, ապահովագրության տեսակներով: Կյանքի ապահովագրության գծով բժշկական ապահովագրության իրականացումն այլ կերպ կոչվում է նաև անընդհատ բժշկական ապահովագրություն, որը տրամադրում է ավելի մեծ ծավալի ապահովագրական ծածկույթ: Կամավոր բժշկական ապահովագրությունը կարող է լինել ինչպես կողեւկտիվ, այնպես էլ՝ անհատական:¹²

Պարտադիր բժշկական ապահովագրությունը պետական սոցիալական ապահովագրության բաղդրիչ մասն է կազմում և ապահովում է բոլոր քաղաքացիներին բժշկական օգնության և դեղամիջոցների ձեռքբերման հնարավորություն, որը տրամադրվում է պարտադիր բժշկական ապահովագրության միջոցների հաշվին այն ծավալով և պայմաններով, որոնք համապատասխանում են պար-

տադիր բժշկական ապահովագրության ծրագրերին: Պարտադիր բժշկական ապահովագրությունը նախատեսում է անհրաժեշտ բժշկական ծառայությունների նվազագույն ցանկ, որը երաշխավորում է բժշկական ապահովագրական վկայագիր ունեցող ցանկացած մարդու՝ օգտվելու բժշկական բազմաթիվ ծառայություններից:

Հասկանալի և ընդունելի է, որ պետությունը չի կարող իր վրա կրել երկրի առողջապահական համակարգի բոլոր ծախսերը, ուստի պետությանն օգնելու լավագույն միջոցներից մեկն էլ հենց կամավոր բժշկական ապահովագրության զարգացումն է: Այս դեպքում արդեն պետության կողմից խնայված միջոցները թույլ կտան նպատակային ձևով գումարներ ուղղել սոցիալապես անապահով խավի բժշկական օգնությանն ու սպասարկմանը՝ կազմակերպելով այն պատշաճ մակարդակով, որի ներդրումից և գործարկումից հետո միայն պետությունը կարող է անցում կատարել պարտադիր բժշկական ապահովագրությանը:

Գտնում ենք, որ բժշկական ապահովագրության ներդրման հարցն իրատեսական է. համակարգային մոտեցման դեպքում այն կարող է շատ արագ լուծում ստանալ ՀՀ-ում: Առաջին կամավոր ապահովագրական դրամարկերը կազմակերպել են 17-րդ դարում Գերմանիայի արհեստավորները, որոնք իրականացնում էին բժշկական (հիվանդանոցային) ապահովագրություն՝ բժշկական ծառայությունների համար վճարելու նպատակով, ինչպես նաև այլ ապահովագրական դեպքերի սոցիալական ապահովագրություն, որոնք այժմ վերաբերում են սոցիալական ապահովագրության համակարգին: Նման ապահովագրական կազմակերպությունները 19-րդ դարում տարածում գտան եվրոպական երկրների մեծ մասում: Ներկայում բժշկական ապահովագրությունն ընդունված է Արևմտյան Եվրոպայի 25 երկրներում, Հյուսիսային Ամերիկայում, Ավստրալիայում, Նոր Զելանդիայում, Շապոնիայում, Ռուսաստանի Դաշնությունում և այլ երկրներում¹³:

Ցավոր, ՀՀ-ում չկա բժշկական ապահովագրությանը վերաբերող առանձին գործող օրենսդրություն, և այս ոլորտը առաջնորդվում է ընդհանուր ապահովագրական օրենսդրությամբ: Առաջին քայլերից մեկն էլ «Բժշկական ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումն է և դրա կիրարկումն ապահովող իրավակարգավորման պարտադիր պայմանների առկայությունը, որոնցով լիարժեք կերաշխավորվեն բժշկական ապահովագրության

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

և դրա հետ կապված առողջության պահպանման, բժշկական օգնության ու սպասարկման՝ անձի սահմանադրական իրավունքի¹⁴ իրացման մատչելիությունը, հետևաբար՝ բնակչության առողջության պահպանման պետական ծրագրերի արդյունավետությունը:

Գաղտնիք չէ, որ Հայաստանի Հանրապետությունը գտնվում է շարունակական բնույթ կրող սոցիալական, իրավական բարեփոխումների ժամանակաշրջանում, որոնք, ինչ խոսք, օբյեկտիվ են և բնորոշ զարգացող երկրներին: Նման պայմաններում ավելի արդիական, նոյնիսկ իրատապ է դառնում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության երաշխիքների ամրապնդման անհրաժեշտությունը: Մեր կարծիքով, խնդիրը նրանում է, որ իրավունքների և ազատությունների խախտումների վերաբերյալ բողոքների և դիմունների լուծման առկա կառուցակարգերը շատ հաճախ բավարար չեն լինում: Մասնավորապես, վարչարարական քաշըուկներից և անտեղի խոչընդունությունից խուսափելու համար շատ քաղաքացիներ չեն դիմում իրավունքների և ազատությունների պաշտպանության ընդունված միջոցների՝ դատական, իրավապահ մարմինների և գործադիր իշխանության համապատասխան մարմինների, քանի որ այդպիսիք պահանջում են շատ ժամանակ, ինչպես նաև դրանց ընթացակարգերը հաճախ խիստ ձևականացված են և դժվարամատչելի: Առողջության պահպանման և բժշկական օգնության ու սպասարկման ոլորտը անմասն չէ նմանատիպ վարչարարություններից ու խոչընդունությունից:

Հայաստանի Հանրապետության կողմից սոցիալական, իրավական կարգի ձևավորման ճամապարհով շարժմելը ենթադրում է պետության և նրա իրավազորության ներքո զարգացող քաղաքացիական հասարակության միջև կապերի մերձեցումն ու ամրապնդումը, որտեղ էական են դառնում մարդու իրավունքների և ազատությունների պահպանումն ու պաշտպանությունը, իշխանության շարաշահումների և սահմանափակման լծակները, այդ թվում մարդու իրավունքների պաշտպանության հասողություն ինստիտուտների ներդրումը: Խոսքը մարդու¹⁵ դրու իրավունքների պաշտպանի՝ օմքության ինստիտուտի ստեղծման մասին է, որը ժամանակակից աշխարհում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության ամենաարդյունավետ կառուցակարգերից մեկն է: Այն բացարկում է վերջինիս ունեցած ժողովրդավարական հատկանիշներով, ինչպիսիք են՝ անկախ կարգա-

վիճակը, խորհրդադարանի կողմից նշանակվելը, նրա գործունեության ողջ ընթացքում անփոփոխ լիությունը, օրենսդրական նախաձեռնության իրավունքը, իրավունքների և ազատությունների պաշտպանության կարիք ունեցող անձանց համար մատչելիությունը, դիմունների և բողոքների քննարկման ձևական ընթացակարգերի բացակայությունը, անվճար իրավաբանական օգնությունը և այլն¹⁶: Այս ինստիտուտի պահանջն, առաջին հերթին, զգացվում է այն ժամանակ, երբ արդեն գոյություն ունեցող մարմինները չեն ապահովում պետական կառավարման նկատմամբ վերահսկողական խնդիրների լուծումը և ժամանակակից ժողովրդավարական պետությունում վարչական կամայականություններից անձանց իրավունքների ու ազատությունների լրացուցիչ պաշտպանության անհրաժեշտություն է առաջանալու¹⁷: Ահա այսպես առաջ քաշեց մարդու իրավունքների հարցերով խորհրդաբանական լիազորի (օմքության) սկանդինավյան ինստիտուտի ստեղծման գաղափարը: Եթե 20-րդ դարի հիսունական թվականներին խորհրդաբանական լիազորի ինստիտուտը գործում էր միայն Շվեդիայում և Ֆինլանդիայում, ապա ներկայում ավելի քան 40 երկրներում գործում են 150-ից ավելի մարմիններ, որոնք իրականացնում են այդ կառույցին բնորոշ գործառույթներ¹⁸:

Կարևոր է այն հանգամանքը, որ օմքությանի գործունեությունը ոչ միայն պաշտպանում է մասնավոր և հանրային իրավունքներն ու շահերը, երաշխափորում է անձանց տեղեկացվածությունը իշխանության շարաշահումների և սխալների վերաբերյալ, նպաստում է կառավարման գործընթացի արդյունավետության ու քափանցիկությանը հասարակության համար, այլ նաև օրենսդիր և գործադիր իշխանություններին իրազեկում է քաղաքացիական հասարակության անդամների տեսակետին¹⁹:

Համակարծիք ենք Ավստրիայի խորհրդաբանական նախկին լիազոր, իրավագիտության դրկտոր, արքֆեսոր Վ. Պիկլի մոտեցմանը, որ օմքությանի ինստիտուտի հիմնումն ու գործունեությունը նոր էջ բացեցին պետության և քաղաքացու, իշխանությամբ օժտված անձանց ու կառավարողների միջև հարաբերություններում²⁰: ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության հարցերով զրադշուկ հատուկ մասնագիտացված ինստիտուտը՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, ստեղծվեց 2004 թվականին²¹, սակայն ինստիտուտի սահ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

մանադրական իրավունքները առավել առարկայացան միայն 2005 թվականի սահմանադրական բարեփոխումների ժամանակ²² հաշվի առնելով նաև ՀՀ՝ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները:

Սույն հոդվածի շրջանակներում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտին անդրադառնալը հատուկ բնույթ է կրում, քանի որ անհրաժեշտ է բացահայտել, թե որքանո՞վ է այն հարաբերվում մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, առողջության պահպանման սահմանադրական իրավունքներին ու դրանց պաշտպանությանը՝ որպես մարդու իրմանարար իրավունք և ազատություն, ինչպես նաև՝ որքանով է մարդու իրավունքների պաշտպանն իրավասու միջամտել քննարկման առարկա հանդիսացող իրավունքների խախտման դեպքերին լուծում տալուն:

Բարձրացված հարցերին պատասխաննելու համար, նշենք, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ դեկավարվելով օրինականության, հասարակական համակեցության և սոցիալական արդարության իրմանարար սկզբունքնուով:

Այսինքն՝ մարդու իրավունքների պաշտպանի նպատակներ են՝

- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և իրմանարար ազատությունների պաշտպանությունը և վերականգնումը,

- մարդու իրավունքների և իրմանարար ազատությունների պետական պաշտպանության երաշխիքների ստեղծումը,

- պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց, պետական ծառայողների կողմից մարդու իրավունքների ու ազատությունների հարգումը և պաշտպանումը:

Սակայն, «Քնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետում սահմանվում է, որ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզա-

վորված, քնակչությանը բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակներ ցուցաբերող ֆիզիկական և իրավաբանական անձինք են, անհատ ձեռներեցները կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները՝ անկախ կազմակերպական-իրավական տեսակից և սեփականության ձևից:

Նշանակում է՝ ՀՀ առողջապահության համակարգը կազմում են՝

ա) պետական և տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց ենթակայությամբ գործող կազմակերպությունների և հաստատությունների հետ միասին,

բ) հանրային և մասնավոր առողջապահական ձեռնարկությունները,

գ) առողջապահության ոլորտի անձնակազմը, որը պատասխանատու է բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների խնամքի և բուժման համար²³:

Փաստորեն, մարդու իրավունքների պաշտպանը կարող է միջամտել այն դեպքում, եթե ՀՀ առողջապահության նախարարությունը.

- չի ապահովել կամ մասամբ է ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը,

- չի ապահովել պետության կողմից երաշխավորված անվճար դեղերի տրամադրումը,

- հրաժարվել է անձին տեղավորել նյարդահոգեբուժական հաստատությունում, անցկացնել անհրաժեշտ փորձաքննություն կամ տրամադրել համապատասխան նյութեր և փաստարդեր²⁴:

Ինչպես վկայում են՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի տարեկան գեկույցներում նրան հասցեազրկած բողոքների հետ տարվող աշխատանքն ու դրանց վիճակագրական վերլուծությունը, առողջապահության ոլորտը, հանձինս՝ ՀՀ առողջապահության նախարարության, նույնպես ամմասն չի մնացել բողոքներից:

Այսպես, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեազրկած բողոքները, ներառյալ՝ ՀՀ առողջապահության նախարարության դեմ, ունեն հետևյալ պատկերը.

- 2004թ. մարտի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանն ստացել է 1294 գրավոր բողոք 2346 քաղաքացուց, որից 10-ը վերաբերել են առողջապահության ոլորտին²⁵,

- 2005թ. ընթացքում մարդու իրավունքների պաշտպանը ստացել է 1551 գրավոր բողոք, որոնց դիմումատունների բիլը կազմել է 1824, որից 19-ը

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վերաբերել են առողջապահության ոլորտին²⁶,

- 2006թ. փետրվարի 20-ից մինչև դեկտեմբերի 30-ը մարդու իրավունքների պաշտպանը 6567 անձանցից ստացել է 2687 դիմում-բողոք, որից 16-ը վերաբերել են առողջապահության ոլորտին²⁷,

- 2007թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 29-ը մարդու իրավունքների պաշտպանը 5764 անձանցից ստացել է 3697 դիմում-բողոք, որից 14-ը վերաբերել են առողջապահության ոլորտին²⁸,

- 2008թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանը 5806 անձանցից ստացել է 4090 դիմում-բողոք, որից 13-ը վերաբերել են առողջապահության ոլորտին²⁹,

- 2009թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանը 4683 անձանցից ստացել է 3783 դիմում-բողոք, որից 12-ը վերաբերել են առողջապահության ոլորտին³⁰,

- 2010թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանը 5221 անձանցից ստացել է 4089 դիմում-բողոք, որից 8-ը վերաբերել են առողջապահության ոլորտին³¹,

- 2011թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանը 4596 անձանցից ստացել է 3681 դիմում-բողոք, որից 16-ը վերաբերել են առողջապահության ոլորտին³²,

- 2012թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը մարդու իրավունքների պաշտպանը 7395 անձանցից ստացել է 7395 դիմում-բողոք, որից 34-ը վերաբերել են առողջապահության ոլորտին³³:

Մինչեւ մարդու բժշկական օգնությունը և սպասարկումն ունի ավելի լայն հասկացություն, ներառում է ավելի մեծ ծառայությունների և դրանց սպառողների շրջանակ, քան անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը և փորձաքննությունը: Մասնավորապես, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ բժշկական օգնությունը և սպասարկումը բնակչությանը կանխարգելի բուժական, դեղորայքային օգնության ցուցաբերումը, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացումը, հարբժշկական և ոչ բուժական բնույթի այլ ծառայությունների մատուցումն է:

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եղակացնելու, որ բժշկական օգնություն և սպասարկում ստացող կամ ստանալու ցանկություն հայտնած անձը իր խախտված իրավունքների քննության կամ վերականգնման համար հնարավորու-

թյուն չունի ամբողջությամբ օգտվելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արտադատական գործիքից՝ մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտից, քանի որ պաշտպանին չեն կարող հասցեագրվել ոչ պետական մարմինների և կազմակերպությունների և դրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև ֆիզիկական անձանց գործողությունների վերաբերյալ դիմում-բողոքները:

Հաշվի առնելով վերոգրյալը և մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ առաջարկում ենք որպես մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի իրացման իրավական երաշխիք՝ ՀՀ-ում ստեղծել բժշկական օգնության և սպասարկման ոլորտի գործուն մեխանիզմ, որը կինդի արտադատական գործիք և ամբողջությամբ կծածկի բժշկական օգնության և սպասարկման ոլորտում ծագած իրավախսախտումների կարգավորման գործընթացը՝ համապատասխանորեն ընդունված օրենքի սահմաններում: Խոսքը առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի մասին է³⁴, քանի որ ներկայում բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների իրավունքների և ազատությունների պաշտպանության միակ «գործուն մեխանիզմը» ՀՀ առողջապահության նախարարությունն է: Առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի հիմնական նպատակը առողջության պահպանման և բժշկական օգնության և սպասարկման ծառայություններից օգտվողների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է նրանց պաշտպանության և իրազեկվածության միջոցով³⁵:

Վստահ ենք, որ ՀՀ-ում առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի ներդրման և գործարկման արդյունքում մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, ինչպես նաև առողջության պահպանման սահմանադրական իրավունքների պաշտպանությունը կորուիդական նոր հիմքի վրա: Դա նաև կկազմի ՀՀ միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների կատարման անքակտելի մասը³⁶:

Այս ինստիտուտի լիարժեք ընկալումը կնշանակի, որ տվյալ պետությունն ու հասարակությունը շատ ավելի մոտ են գտնվում ժողովրդավարությանը, և սոցիալական արդարությունն ավելի է մոտենում իր սկզբնական ակունքներին՝ դրանով իսկ ապահովելով անձանց կողմից իրենց սահմանադրությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րական իրավունքների պատշաճ իրացումը:

Նման ինստիտուտի ստեղծման արդիականությունը մեծապես պայմանավորված է մարդու իրավունքների պաշտպանության առավել հուսալի և արդյունավետ մեխանիզմների ձևավորման անհրաժեշտությամբ: Ինչպես շատ երկրների, այնպես էլ ՀՀ պարագայում գործադիր իշխանության մարմնների և դրանց պաշտոնատար անձանց կողմից կատարված ապօրինի գործողությունները վերադասության կարգով բողոքարկելը ցանկալի արդյունք չեն տալիս: Հենց այդ նկատառումներից ելնելով էլ ժամանակն է, որ պետությունը ծանրաբեռնվի նաև առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի ստեղծման՝ հիմքում ունենալով մարդու իրավունքների պաշտպանի և ֆինանսական համակարգի հաշտարարի³⁷ ինստիտուտների ստեղծման և գործարկման անառարկելի արդյունավետությունն ու փորձառությունը, որը կործի իշահ և ի բարօրություն իր իրավագործության ներքո գտնվող բնակչության առողջության, քանի որ տրամաբանութեն պետության մեկ քաղաքացու առողջությունը նրա ողջ բնակչության առողջությունն է:

Առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի ձևավորված պրակտիկան ցույց է տալիս, որ մի շարք երկրներում (Միացյալ Թագավորություն³⁸, Ամերիկայի Միացյալ Նահանգներ³⁹, Ավստրալիա⁴⁰ և այլն)⁴¹ ի սկզբանե հնարավոր է համարվել մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի պաշտպանությունն իրականացնող առանձին և անկախ հաստատության գոյությունը: ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտն իր բնույթով սահմանադրաբարավական ինստիտուտ է, որն իր սահմանադրական գերակայությամբ պետք է պայմանավորի նրա անկախության և գործունեության երաշխավորվածությունը: Այնուամենայնիվ, նման ինստիտուտի ձևավորման անվիճարկելի սահմանադրաբարավական նախադրյալների առկայության պայմաններում, ցավոք, դեռ չեն ստեղծվել մարդու իրավունքների պաշտպանի՝ մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու սահմանադրական իրավունքի պաշտպանության կազմակերպման և գործունեության հիմքերը:

Այդ իսկ պատճառով, մեր կարծիքով, առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի կարգավիճակի առաքելության, կազմակերպման, ինչպես նաև գործունեության հիմունքների օրենսդրական ամրագրումը գերինդիր է մեր երկ-

րում, չափազանց կարևոր է այդ ինստիտուտի ձևավորման և գործունեության արդյունավետության երաշխավորման ապահովման համար:

Այսպես, որպես անձի բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի սահմանադրաբարավական երաշխիք՝ առողջապահության համակարգի հաշտարարի ինստիտուտի ձևավորմամբ կլուծվեն այնպիսի առաջնային խնդիրներ, ինչպիսիք են՝

- հանրապետությունում բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվող անձանց իրավական և իրավաբանական պաշտպանվածության աստիճանի բարձրացումը,

- մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի օրենսդրական պահովման կատարելագործմանը նպաստելը և ՀՀ օրենսդրության ներդաշնակեցումը միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներին և նորմերին,

- հաշտարար-առողջապահական համակարգ և հաշտարար-հասարակություն կառուցղական համագործակցության ձևավորումը և այդ համագործակցության զարգացմանը նպաստելը,

- մարդու բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքի պաշտպանության հնարավորությունների և մատչելիության ապահովումը:

Իսկ լիազորությունների ամրագրման իմաստով ՀՀ-ում առողջապահության համակարգի հաշտարարը կլիմի այն անհատը, ում գործունեության հիմնական ուղղությունները կլիմեն՝

- ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով, ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված՝ մարդու՝ բժշկական օգնություն և սպասարկում ստանալու, առողջության պահպանման իրավունքների և դրանց երաշխիքների խթանումն ու պաշտպանումը,

- բժշկական օգնությունից և սպասարկումից օգտվողների լիմում-բողոքները քննելու կարողությունն ընդուն բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների և առողջապահության ոլորտում այլ ծառայություններ մատուցողների,

- բժշկական օգնության և սպասարկման ոլորտում ծագած վեճների լուծման համար չեզոք միջնորդ լինելով՝ միաժամանակ օժտված լինելով անկողմնակալ և օրյեկտիվ քննություն անցկացնելու, ինչպես նաև առաջարկություններ անելու կարողությամբ,

- մարդու առողջության պահպանման, բժշկա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների պաշտպանության ոլորտում ՀՀ համար որոշակի քաղաքականություն առաջարկելը, համակարգային կառուցակարգեր ստեղծելը՝ ապահովելու համար նշված քաղաքականության ամբողջական իրագործումը,

- առողջապահության, բժշկական օգնության և սպասարկման ոլորտներում գիտահետազոտական, գիտագործնական, կրթական և այլ ծրագրերի իրականացումը ՀՀ-ում նարդու առողջության պահպանման, բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունքների խթանման ուղղությամբ՝ դրանք համակարգելով ՀՀ անունից հանդես եկող այլ պատկան մարմինների կողմից իրականացվող նույնարուվանդակ ծրագրերի հետ,

- խորհրդափոխանակության և տեղեկությունների փոխանակման նկատառումներից ելնելով՝ սերտ կապի անընդհատ պահպանումը մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային և միջազգային կառավարական, միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների ու մարմինների հետ,

- իր աշխատանքի իրականացումն առանց գործադիր մարմնի ներկայացուցիչների և այլ շահագրգիռ կողմերի ազդեցության՝ հիմնվելով անկախության սկզբունքի վրա:

¹ Տե՛ս Օбществознание. / Под ред. Марченко М. Н. - М.: Зерцало. 1999, С. 177.

² Տե՛ս Общая теория государства и права. Академический курс. Т.1. / Отв. Ред. Марченко М. Н. - М.: Зерцало-М. 2001, С. 461.

³ Տե՛ս Лубенникова С. А. Теоретико-правовые основы обеспечения социально-экономических прав человека и гражданина в Российской Федерации (Региональный аспект): Дис. канд. юрид. наук.: Абакан. 2004, С. 19.

⁴ Տե՛ս Большой юридический словарь. 3-е изд., доп. и перераб. / Под ред. проф. А. Я. Сухарева. - М.: ИНФРА-М. 2007, С. 858.

⁵ Ընդունվել է 2002 թվականի ապրիլի 16-ին, թիվ ՀՕ-324:

⁶ Ընդունվել է 2002 թվականի դեկտեմբերի 11-ին, թիվ ՀՕ-474-Ն:

⁷ Ընդունվել է 2004 թվականի մայիսի 25-ին, թիվ ՀՕ-80-Ն:

⁸ Ընդունվել է 2011 թվականի նոյեմբերի 15-ին, թիվ ՀՕ-275-Ն:

⁹ Սանրաման տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 14.09.2010թ. թիվ ՄԴ-913 որոշումը:

¹⁰ Փոխապատվաստման նպատակով իր օրգանները և (կամ) հյուսվածքները օրենքով սահմանված կարգով կամովին տրամադրող ֆիզիկական անձ («Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» 16.04.2002թ. ՀՀ օրենքի 1-ին հոդված):

¹¹ Ֆիզիկական անձ, որին բուժական նպատակով պետք է փոխապատվաստեն օրգաններ և (կամ) հյուսվածքներ («Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» 16.04.2002թ. ՀՀ օրենքի 1-ին հոդված):

¹² Տե՛ս Տեղական և միջազգային ապահովագրական շուկային վերաբերող կայքում տեղակայված բժշկական ապահովագրության վերաբերյալ նյութը՝ <http://www.insurance.am/insurance/59-insurance-types/324-medical-insurance>:

¹³ Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքում տեղակայված բժշկական ապահովագրության վերաբերյալ նյութը՝ http://www.mss.am/home/links.php?id_link=239:

¹⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով), 27.11.2005թ., հոդված 38-րդ:

¹⁵ Իրավաբանական գրականության մեջ «օմբուդսման» (ombudsman) բառի բազմաթերու վերտառությունները ներկայանում են մի քանի տարբերակով՝ կախված լեզվաբնակչությունից: Օրինակ, անգլերեն և ֆրանսերեն լեզվում բառը բառարտասանությունից: Օրինակ՝ «ուսուցչի վերջին վանկի»՝ «տառ» արտասանությունը փոխվում է «ան»-ի կամ «են»-ի: Ուստի մեր կողմից «օմբուդսման» տարբերակի օգտագործումն ունի պայմանական նշանակություն: Տե՛ս Անգլերեն-հայերեն արդի բառարան. - Եր.: «Անկյունաքար», 2010թ., էջ 716: Նովայ ֆրանցузско-ռուսский словарь. 4-е изд. - М.: Рус. яз., 1998, С. 752.

¹⁶ Տե՛ս Սահմանույթ. Ո. Զ. Մարդու իրավունքների պաշտպանը ՀՀ պետական մարմինների համակարգում: Իրավ.

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

¹⁷ զիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2008, էջ 60-75:

¹⁸ Տե՛ս Մալիչև Վ. Ա., Սանտու Պ. Դ. Роль правового института омбудсмена в системе контроля соблюдения прав и свобод личности. // Воронежский государственный университет. Институт регионального законодательства. Воронеж, 1998, С. 101.

¹⁹ Տե՛ս Բոյցովա Վ. Վ. Правовой институт омбудсмена в системе взаимодействия государства и гражданского общества. Автореф. дис. докт. юрид. наук. М., 1995, С. 3.

²⁰ Տե՛ս V. Pickl - The protection of Human Rights by the Office of the Austrian Ombudsman (Volksanwultschalt) // Austrian-Soviet Round Table on the Protection of Human Rights, Arlington, 1992, էջ 157:

²¹ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքը, թիվ ՀՕ-23-Ն, ընդունվել է 21.10.2003թ-ին: ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 2003թ., թիվ 21(119):

²² Մարդու իրավունքների պաշտպանի վերաբերող դրույթներ սահմանվեցին 27.11.2005թ. անցկացված հանրաքվեի արդյունքում ընդունված Սահմանադրության փոփոխությունների 18-րդ և 83.1-ին հոդվածներով:

²³ Օրինակ, Երևանում առողջապահական հաստատությունները հիմնականում փակ քաժնետիրական ընկերություններ են, իսկ սեփականության ձևը տարբեր է. կան պետական ընկերություններ, որոնց հիմնադիրը առողջապահության, կրթության և գիտության նախարարություններն են կամ Երևանի քաղաքապետարանը: Կան նաև մասնավոր ընկերություններ: Մայրաքաղաքում գործում են բժշկական քաղմանցուղ հաստատություններ: Երևանում բոլոր դեղատներն ու ատամնարութական համարութարանները (պոլիկլինիկա) ոչ պետական կազմակերպություններ են: Մանրամասն տե՛ս <http://www.yerevan.am/1-124-Health.html>:

²⁴ Տե՛ս ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնական կայքի՝ «Դիմել պաշտպանին» առցանց քաժնի առողջապահության նախարարության վերաբերյալ տվյալները <http://www.ombuds.am/conditions/browse>:

²⁵ Տե՛ս Տարեկան գեկույց 2004թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2005թ., էջ 17-21:

²⁶ Տե՛ս Տարեկան գեկույց 2005թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2006թ., էջ 4:

²⁷ Տե՛ս Տարեկան գեկույց 2006թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2007թ., էջ 8-12:

²⁸ Տե՛ս Տարեկան գեկույց 2007թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2008թ., էջ 4-10:

²⁹ Տե՛ս Տարեկան գեկույց 2008թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2009թ., էջ 11-17:

³⁰ Տե՛ս Տարեկան գեկույց 2009. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2010թ., էջ 4-9:

³¹ Տե՛ս Տարեկան գեկույց 2010թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2011թ., էջ 5-9: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 25.02.2013 թ. թիվ 14.11806-13 գրությունը:

³² Տե՛ս Տարեկան գեկույց 2011թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2012թ., էջ 127: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 25.02.2013 թ. թիվ 14.11806-13 գրությունը:

³³ Տե՛ս Տարեկան գեկույց 2012թ. ընթացքում ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին: 2013թ., էջ 104-108: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի 26.02.2014 թ. թիվ 2-0010 գրությունը:

³⁴ Տե՛ս «Առողջապահության համակարգի հաշտարար»-ի ինստիտուտը տարբեր երկրներում ունի տարբեր անվանումներ. օրինակ, Միացյալ Թագավորությունում՝ «Health Service Ombudsman» (առողջապահական ծառայությունների պաշտպան), Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ «Medical Care Ombudsman» (բժշկական խնամքի պաշտպան), Ավստրալիայում՝ «Private Health Insurance Ombudsman» (անձնական առողջության պաշտպան) և այլն:

³⁵ Տե՛ս Կողումբիա նահանգի առողջապահության համակարգի հաշտարարի վերաբերյալ տվյալները <http://healthreform.dcc.gov/DC/Health+Reform/Insurance+Coverage+Options/Health+Care+Ombudsman>:

³⁶ Օրինակ, 1950թ. նոյեմբերի 4-ին Հռոմում ընդունված՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին նվիրական կոնվենցիայի դրույթներից թիսող պարտավորությունների կատարումը, որն ամրագրում է մարդու հիմնական իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև դրանց երաշխիքները: ՀՀ-ը ստորագրել է այն 25.01.2001թ-ին և վավերացրել՝ 26.04.2002թ-ին: Տե՛ս http://www.echr.coe.int/NR/rdonlyres/E0FB96BF-90B6-439C-BCB1-5FF86CD0029B/0/PCP_Armenia_EN.pdf:

³⁷ Հաշտարարի գրասենյակը ստեղծվել է 2008թ. հունիսի 17-ին ընդունված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Ֆինանսական համակարգի հաշտարարն իր մասնագիտական գործունեությունը սկսել է 2009թ. հունվարի 24-ից:

ԱՐԴԻՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

³⁸ Տե՛ս, օրինակ, Միացյալ Թագավորությունում գործող «առողջապահական ծառայությունների պաշտպանի» պաշտոնական կայքը՝ <http://www.ombudsman.org.uk/>:

³⁹ Տե՛ս, օրինակ, ԱՄՆ-ում գործող «քծկական խնամքի պաշտպանի» պաշտոնական կայքը՝ <http://www.medicare.gov/>:

⁴⁰ Տե՛ս, Ավստրալիայում գործող «անձնական առողջության ապահովագրության պաշտպանի» պաշտոնական կայքը՝ <http://www.phio.org.au/>:

⁴¹ Տե՛ս Սալտման Բ. Բ., Ֆիգերաս Ջ. Ռеформы системы здравоохранения в Европе. Анализ современных стратегий: Пер. с англ. - М.: ГЭОТАР МЕДИЦИНА. 2000, С. 98:

Կորյոն Արևշտյան

Руководитель юридического департамента второго армянского телеканала,
преподаватель медицинского права на кафедре постдипломного образования
управления здравоохранением и экономики Ереванского государственного
медицинского университета имени М. Гераси

РЕЗЮМЕ

Гарантии реализации права на получение медицинской помощи и услуг в Республике Армения

В этой статье были изучены реализация правовых, политических, социальных гарантий конституционного права человека на получение медицинской помощи и услуг, а также их доступность, полнота и практичность.

С разных точек зрения были изучены как внутренние, так и зарубежные опыты и подходы, касающиеся этого вопроса, в результате чего в статье были сделаны ряд рекомендаций.

Ключевые слова: право на получение медицинской помощи и услуг, правовые, политические, социальные гарантии, медицинское страхование, Омбудсмен здравоохранения.

Koryun Arevshatyan

Head of law department at Armenian second TV Channel,
Lecturer of health law at the postgraduate education department of health
governance and economics at Yerevan State Medical university after M. Heratsi

SUMMARY

The guarantees of realization of the right to receive medical care and services in the Republic of Armenia

This article studied the realization of legal, political, social guarantees of the Constitutional human right to receive medical care and services, as well as their availability, completeness and practicality.

From different points of view have been studied both domestic and foreign experiences and approaches related to this issue, resulting in the article were made a number of recommendations.

Keywords: The right to receive medical care and services, legal, political, social guarantees, health insurance, Health Care Ombudsman.